# ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

05.10.2016 10:51

ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությունը՝ Պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանի գլխավորությամբ, հոկտեմբերի 4-ին Բոսնիա և Հերցեգովինայի մայրաքաղաք Սարայեվոյում մասնակցել է Իրավունքի գերակայության Բալկանների տարածաշրջանային ցանցի (BRRLN) հերթական հանդիպմանը:

Հանդիպման հիմնական նպատակներից էր քննարկել Բալկանյան երկրներում անվճար իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմները, փաստաբանների շարունակական ուսուցման զարգացման ուղղությամբ իրականացվելիք քայլերը:

Միջոցառման օրակարգային հարցերից է եղել Հայաստանի Հանրապետության հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանական դպրոցի գործունեության հաջողված փորձի ներկայացումը:

Արթուր Հովհաննիսյանը գործընկերներին ներկայացրել է պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմները Հայաստանում, այդ ուղղությամբ առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները, հանրային պաշտպանի գրասենյակի կառուցվածքը, ֆինանսավորումը, հանրային պաշտպանների ընտրության ընթացակարգը, «էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագիրը: Ներկաների խնդրանքով նա մանրամասնել է նաև ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատանքի առանձնահատկությունները:

Հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանական դպրոցի օրինակները հետաքրքրության են արժանացել Բալկանյան փաստաբանական կառույցների ղեկավարների շրջանում:

Միջոցառման ընթացքում քննարկվել են նաև ՀՀ փաստաբանների պալատի և Բալկանյան հինգ երկրի փաստաբանական կառույցների միջև հնարավոր համագործակցության եզրերը:

BRRLN-ի կազմում են Բոսնիա և Հերցեգովինայի, Սերբիայի, Ալբանիայի, Մակեդոնիայի և Կոսովոյի փաստաբանական կառույցները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })